02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

36 (1435) • 27 սեպտեմբերի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Խորհրդակցություն՝ զորավարժությունից առաջ

Սեպտեմբերի 23-ին ոստիկանությունում տեղի ունեցավ օպերատիվ խորհրդակցություն, որը վարում էր ոստիկանության պետի պաշտոնակատար, ոստիկանության գնդապետ Արման Սարգսյանը: Մասնակցում էին ոստիկանության ղեկավար կազմը եւ պատասխանատու ստորաբաժանումների պետեր: Օպերատիվ խորհրդակցության նպատակը սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 5-ը հանրապետությունում անցկացվելիք ռազմավարական զորավարժություններից առաջ զորավարժությանը մասնակից ոստիկանական կարգախմբերի վերաբերյալ վերջին ցուցումները տալն էր: «Ուսումնավարժական հավաքների եւ պարապմունքների ընթացքում զորահավաքային նախապատրաստության միջոցառումների իրականացմամբ

հնարավոր կլինի գնահատել ռազմական անվտանգության համակարգի զորահավաքային հնարավորությունները: Ոստիկանությունը զորահավաքի ժամանակ իր հստակ գործողություններն ունի: Դա պահեստազորում գտնվող քաղաքացիների մոբիլիզացիան է, զինկոմիսարիատներից զորահավաքական ու տեղակայման վայրեր մեկնող տրանսպորտային միջոցների անվտանգ տեղաշարժի ապահովումը եւ այլն: Սա հայրենիքի նկատմամբ մեր պարտքն է, եւ մենք պետք է այն պատվով կատարենք»,- ասաց Արման Սարգսյանը:

Խորհրդակցության ընթացքում քննարկվեցին ռազմական դրության պայմաններում ոստիկանական ուժերի պատրաստականության, ծառայողների տեղաբաշխման ու գործողությունների վերաբերյալ այլ հարցեր եւս:

Ոստիկանությունը կոռուպցիոն հանցագործություններ է բացահայտել

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ Իջեւանի համատիրությունների կառավարիչը ապօրինություններ է թույլ տվել:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ համատիրության կառավարիչը իր կարգադրիչ եւ այլ լիազորություններն օգտագործել է կազմակերպության շահերին հակառակ՝ այլ անձանց օգտին:

Մասնավորապես, 2013 թ. համատիրության եւ մի բնակչի միջեւ կնքվել է ձեւական նվիրատվության պայմանագիր, որով համատիրությունը 349 քառակուսի մետր կիսանկուղային տարածքը նվիրաբերել է կառավարչի խնամուն: Այնուհետեւ համատիրության կառավարիչը, քննությանն այս պահին հայտնի տվյալներով, նշված տարածքը բաժանել է երկու մասի եւ առանձնացված մի տարածքը երկու միլիոն դրամով վաճառել Իջեւանի մեկ այլ բնակչի:

Պարզվել է նաեւ, որ Իջեւանի մի բնակչուհի, չհանդիսանալով համատիրության աշխատակից, համատիրության կառավարչի գիտությամբ եւ թողտվությամբ, ներկայանալով որպես համատիրության աշխատակցուհի՝ զբաղվել է համատիրությանը վճարվող գումարների դրամահավաքով: 2017-2019 թթ. հավաքագրված շուրջ 7 միլիոն 500 հազար դրամից մոտ 6 միլիոն դրամն առձեռն տրվել է համատիրության կառավարչին: Նա էլ գումարը համատիրության հաշվեհամարին մուտքագրելու փոխարեն յուրացրել է:

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության աշխատակիցների հերթական բացահայտումը Գեղարքունիքի մարզում կատարված ապօրինությունների վերաբերյալ էր:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ 2017-2019 թթ. Ճամբարակ համայնքի ղեկավարի հայրը, առանց պետական գրանցման ու հատուկ թույլտվության, Ճամբարակ ու Շողակաթ համայնքների վարչական տարածքում, ինչպես եւ «Սեւան ազգային պարկի» Արտանիշի մասնաճյուղի տարածքում կազմակերպել եւ իրականացրել է ապօրինի ձեռնարկատիրություն: Մասնավորապես, արդյունահանել է լիցենզավորման ենթակա 1200 խմ ավազ եւ 1000 խմ հող, որոնք շուրջ 6 միլիոն 200 հազար դրամով իրացրել է:

Դեպքերի առթիվ ոստիկանությունում քրեական գործեր են հարուցվել, որոնք ուղարկվել են քննչական կոմիտե:

Սպանության փորձ

Սեպտեմբերի 19-ին ոստիկանության Տարոնի բաժնում հիվանդանոցից ահազանգ ստացվեց, որ գլխի հրազենային վնասվածքով 28-ամյա երիտասարդ է հոսպիտալացվել:

Քրեական հետախույզները պարզեցին, որ երիտասարդը վնասվածքը ստացել է Վանաձորի Գորկու փողոցում. անհայտ անձը որսորդական հրացանից կրակել էր նրա ուղղությամբ:

Հարուցվեց քրեական գործ: Օպերատիվ-հետախուզական միջոցառումներին միացան նաեւ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողները: Հայտնաբերվեց հանցագործության գործիք հրացանը: Շուտով հայտնի դարձավ նաեւ առանձնապես ծանր հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձի ինքնությունը, որին հայտնաբերելու միջոցառումներին զուգահեռ՝ իրականացվեց նաեւ բացատրական աշխատանք:

Սեպտեմբերի 22-ին Վանաձորի բնակիչ, 31-ամյա կասկածյալը ներկայացավ ոստիկանության Տարոնի բաժին:

Կատարվում է նախաքննություն:

Տնօրեններ են ձերբակալվել



Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում օպերատիվ տվյալներ էին ստացվել, որ Երեւանի մի բնակիչ մայրաքաղաքի դեղատներից ձեռք է բերում հոգեմետ դեղահաբեր: Սեպտեմբերի 19-ին նա հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին: Տղամարդու անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց հոգեներգործուն չորս դեղահաբ: Հետագա միջոցառումներով ոստիկանները պարզեցին, թե տղամարդը կոնկրետ ո՞ր դեղատներից եւ որքան դրամով է ձեռք բերել դեղահաբերը: Խուզարկություններ կատարվեցին Կոմիտասի եւ Արշակունյաց պողոտաների երկու դեղատներում: Հայտնաբերվեց համապատասխանաբար՝ 582 եւ 150 լիրիկա դեղահաբ: Խուզարկություն կատարվեց նաեւ Քաջազնունու փողոցի դեղատներից մեկում, որտեղից եւս հայտնաբերվեց նույն դեղահաբից 111 հատ:

Կատարվում է նախաքննություն:

Յուրացումներ անտառտնտեսությունում

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում տեղեկություններ էին ստացվել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Ճամբարակի անտառտնտեսության տնօրենը ապօրինություններ է թույլ տվել:

Նախապատրաստված նյութերով պարզվել է, որ անտառտնտեսության տնօրենը 2005-ից 2019 թվականների ընթացքում իր մտերիմներին հրամանագրել է տարբեր հաստիքներում, սակայն նրանք փաստացի աշխատանքի չեն ներկայացել, իսկ նրանց անվամբ աշխատավարձ է դուրս գրվել եւ յուրացվել, այս պահին քննությանը հայտնի տվյալներով՝ ընդհանուր 27 միլիոն 170 հազարից ավելի դրամ:

Քրեական գործ է հարուցվել:

Ինքնամաքրվելու համարձակություն

Պետության հանդեպ մարդկանց վստահությունը, անշուշտ, պայմանավորված է նաեւ ոստիկանության աշխատանքով, ոստիկանի գործողություններով, վարքագծով, հետեւաբար՝ նաեւ նրա հանդեպ վստահությամբ: Ուրեմն, իր մասնագիտական գործառույթներին զուգահեռ՝ ոստիկանը պարտավոր է նախանձախնդիր լինել, որ յուրաքանչյուր քաղաքացի վստահությամբ եւ հարգանքով վերաբերվի իր դժվար, հաճախ՝ վտանգավոր աշխատանքին, հիշի, որ ոստիկանն այն մարդն է, ում առաջինն է ապավինում փորձության ժամին, ում ներկայությունն է սթափեցնում օրինազանցին, ինքնատիրապետումը կորցրած ստահակին: Ումից, թերեւս, նաեւ ամենաշատն է դժգոհում, բայց նեղության, հուսահատության, փորձության առաջին իսկ պահին հենց նրան դիմում:

էջ 2

Զգուշացեք եւ չեք դառնա զոհ

Անծանոթ միջնորդների ծառայություններից օգտվելիս անհրաժեշտ է ճշգրտել գործարքի մանրամասները:

էջ 3

Անցյալի ուրվականը

Երիտասարդ կինը հինգ-վեց ամիս Թուրքիայի տարբեր քաղաքներում զբաղվել էր մարմնավաճառությամբ:

էջ 6

Ծխելը վնասակար է

Երթեւեկելիս ծխող վարորդը ճանապարհային երթեւեկության կանոնների պոտենցիալ խախտող է:

էջ 7

Օպերատիվ

Ինքնամաքրվելու համարձակություն

Սկիզբը՝ էջ 1

Խոստովանենք. վերջին ժամանակների վիճակագրությունը մտահոգիչ է՝ մի շարք գործոններով պայմանավորված՝ համակեցության կանոնների ձեւախեղում է տեղի ունեցել, արժեհամակարգեր են փոխվել, հասարակության մեջ իրավունքների ու պարտականությունների հանդեպ եսասիրական դրսեւորում կա՝ ապահով ու անվտանգ ապրելն իմ իրավունքն է, այն պաշտպանելը՝ քո պարտականությունը: Հասարակության մի մասի այս պահանջատիրությունը որքան իրավացի, նույնքան եսակենտրոն է. իմը իրավունքներն են, քոնը՝ պարտականությունը: Այդպես չի լինում, այդպիսի բաժանումը պատասխանատվությունից խուսափելու փոքրոգություն է: Քաղաքակիրթ հասարակություն, օրենքի գերակայությունն ունեցող պետություն, եթե դա է բոլորիս գերխնդիրը, բոլորս պետք է ստեղծենք: Մեզնից ամեն մեկը նախ պետք է օրինապաշտ լինի եւ իրավունքները «սեփականաշնորհելիս» մի փոքր մաս էլ պարտականություններից իրեն վերապահի: Ոչ մի երկրի ոստիկանություն չի կարող կարգուկանոնի, օրենքի բացարձակ երաշխավորը լինել, եթե հասարակության ստվար մասը օրենքն ու կարգը խախտելով ու ոստիկանությանը փնովելով, չհարգելով է զբաղված: Հասարակությունն այդպես չի առողջանում, օրենքի գերակայությունն այդպես չի լինում, եթե պարտականությունների եւ իրավունքների միակողմանի բաժանում է արվում:

Ինքնամաքրվելու համարձակություն պետք է ունենա ամեն ոք: Որովհետեւ ոչ մի հզոր երկրի ուժեղ ոստիկանությունն էլ չի կարող օրենք ու իրավունք պաշտպանել, եթե հասարակությունը կամ հասարակության մի ստվար մասը ամեն օր օրենք խախտի, մի մասն էլ փարիսեցիություն անի:

Հանցավորության, մարդկային հարաբերությունների խաթարման, արժեհամակարգերի որակափոխման պատճառները մի մեծ շարք են, սկսած՝ համակեցության դրսեւորումներից մինչեւ նյութապաշտության՝ ժամանակների պարտադրանքը: Այս իրողության մեջ ամեն օր քննություն են հանձնում մեր մարդկային կարողությունները եւ ունակությունները, մեր իրավունքներն ու պարտականությունները, մեր կամեցողությունն ու չկամությունը, մեր գայթակղություններն ու գիտակցությունը: Քայլերը մենք ենք անում՝ նախապատվությունը տալով մեր խառնվածքում առկա չար կամ բարի ուժերին: Յուրաքանչյուր քայլ մեզ տանում է այնտեղ, դեպի ուր գցում ենք քայլը: Հենց այդ քայլը գցելուց առաջ եթե փորձենք մտածել՝ ուրեմն մեր իրավունքներն արդեն պաշտպանված են, մեր պարտականությունները՝ կատարված: Ուրեմն իրավական պետությունն ու քաղաքակիրթ հասարակությունը մենք ենք, հեռվում նշմարվող-անհետացող տեսիլք չեն:

Որքան էլ պարծենանք մեր հազարամյա մշակույթից ու քաղաքակրթությունից, միջնադարում «Դատաստանագիրք» ունենալուց, եկեք օրենքն այսո՛ր հարգենք, այսո՛ր չխախտենք օրենքը: Փորձենք այսո՛ր թիկունք լինել ոստիկանին, որովհետեւ իր դժվարին գործում մեր իրավագիտակցությունն ու աջակցությունը ունենալով՝ ավելի դյուրին կլինի հանցավորության դեմ պայքարը, ավելի սահուն կլինի իրավական պետություն դառնալու գործընթացը: Ի վերջո, բոլորիս եւ յուրաքանչյուրիս գերնպատակը նույնն է՝ ուժեղ ու ապահով հայրենիք: Կունենանք, եթե հայրենիքը սեփական բարեկեցությունից առավել սիրելու գիտակցումն ունենանք եւ օրենքը չխախտելու, օրենքի պաշտպանին հարգելու վճռականությունը:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սեպտեմբերի 23-ին ողբերգական մահով ընդհատվեց ոստիկանության գեներալ-գնդապետ Հայկ Հարությունյանի կյանքը:

Ծնվել է 1955 թ., Երեւանում:

1976 թվականից ՆԳ համակարգում էր:

1977-1981 թթ. ԽՍՀՄ ՆԳՆ Ռյազանի բարձրագույն դպրոցում սովորելուց հետո աշխատանքի է անցել ՆԳ նախարարության քրեական պատիժների իրականացման համակարգում՝ տեսուչ, ավագ օպերլիազոր, ուղղիչ-աշխատանքային հաստատության պետի տեղակալ, պետ:

1992 թ. նշանակվել է ՆԳ նախարարի տեղակալ, 1994-ին՝ առաջին տեղակալ:

Ծանր տարիներ էին. Արցախի եւ Հայաստանի սահմանամերձ գոտիների պաշտպանական գործողություններին մասնակցելու համար ՆԳ համակարգի ստորաբաժանումներ էին կազմավորվում, եւ այդ գործում ծանրակշիռ էր Հայկ Հարությունյանի դերը: Միեւնույն ժամանակ, երկրի ներսում ակտիվացել էին զինված հանցավոր խմբավորումները:

1999 թ. նոյեմբերին գեներալ-մայոր Հայկ Հարությունյանը նշանակվում է ներքին գործերի նախարար: Նա կարողացավ հանրապետությունում ապահովել կայուն օպերատիվ իրավիճակ, ներդրացնել համագործակցությունը այլ երկրների իրավապահ կառույցների հետ, լուծել կադրերի պատրաստման խնդիրը, բարելավել օրենսդրական դաշտը, կյանքի կոչել բարեփոխումների ծրագրեր:

Ոստիկանության գեներալ-գնդապետ Հայկ Հարությունյանը համակարգը ղեկավարեց մինչեւ 2008 թվականը:

Պետականամետ մտածողությամբ օժտված, պատվախնդիր սպայի հիշատակը միշտ կմնա նրան ճանաչողների սրտերում:

Չարաշահվել են պաշտոնական լիազորություններ

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում տեղեկություններ են ստացվել նախկինում կատարված ապօրինությունների վերաբերյալ:

Տեղեկությունների հիման վրա գլխավոր վարչության կազմակերպված հանցավոր խմբավորումների եւ դրանց պարագլուխների դեմ պայքարի բաժնի ծառայողները հետախուզական միջոցառումներ են ձեռնարկել՝ պարզելով, որ Ավան վարչական շրջանի սոցիալական ու բարեգործական ծրագրերին աջակցելու, տոնական եւ հիշատակի օրերին սոցիալական եւ բարեգործական ծրագրեր իրականացնելու, ինչպես եւ զորակոչի կազմակերպմանն աջակցելու նպատակով 2014-2018 թվականների ընթացքում Երեւանի քաղաքապետարանը Ավանի մի հիմնադրամի փոխանցել է 190 միլիոն 770 հազար դրամ:

Նախապատրաստված նյութերի շրջանակում ձեռնարկված միջոցառումներով փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի պաշտոնատար անձանցից մեկը, խմբային եւ անձնական այլ շահերից ելնելով, տարբեր անձանց պարտադրել է հիշյալ հիմնադրամին փոխանցել խոշոր չափի գումարներ՝ շինարարություն կատարելու թույլտվություն տալու համար:

Պաշտոնեական լիազորությունների չարաշահման հատկանիշներով ոստիկանությունում քրեական գործ է հարուցվել եւ ուղարկվել է քննչական կոմիտե:

Կատարվում է նախաքննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Ապօրինի հատել էր 65 ծառ

Ոստիկանությունը հատուկ ուշադրություն է դարձնում բնապահպանական խնդիրներին՝ հատկապես ապօրինի ծառահատումները բացառելուն եւ յուրաքանչյուր նոր դեպք արձանագրելիս իրազեկում է հասարակությանը, ինչը նույնպես զգոնության կոչ է:

Նման մի դեպք, ոչ ստուգայցի ժամանակ, այլ՝ օպերատիվ տվյալներն իրացնելով, ոստիկանության Գուգարքի բաժնի ծառայողները բացահայտեցին:

Սեպտեմբերի 17-ին ոստիկանության Գուգարքի բաժնում տեղեկություններ ստացվեցին, որ Եղեգնուտ գյուղի վաքսունամյա մի բնակիչ գյուղի հանդամասում բենզասղոցով ապօրինի ծառ է հատել եւ փայտանյութը տեղափոխել տուն: Նույն օրը տղամարդը բաժին հրավիրվեց, խոստովանեց, որ ծառն օգոստոս ամսին է հատել, բայց, ինչպես նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվեց, դա նրա միակ ապօրինի ծառահատումը չէր:

Կասկածվողը խոստովանական բացատրություն է տվել, որ սեպտեմբերի 5-ից 10-ը Եղեգնուտ գյուղի մերձակա անտառից բենզասղոցով տարբեր տեսակի ու տրամագծի վաքսունհինգ ծառ է հատել:

Դեպքի վայրի զննության ընթացքում տղամարդը մատնացույց է արել ե՛ւ փայտանյութը, ե՛ւ հատված ծառերի կոճղերը, 3 խմ փայտանյութ էլ ոստիկանները հայտնաբերել են նրա տան բակում:

Կատարվում է քննություն:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Երիտասարդին դանակահարել էին

Սեպտեմբերի 21-ին «Մասիս» բժշկական կենտրոնի «շտապօգնության» կայանից ոստիկանության Մասիսի բաժին ահազանգ էր ստացվել, որ Այնթապ գյուղից դանակահարված մարդ են տեղափոխել հիվանդանոց:

Մեկնած օպերատիվ խմբի ծառայողները պարզել են, որ տուժածին սուր-կտրող-ծակող առարկայով մարմնական վնասվածքը պատճառել են ժամը 19.30-ի սահմաններում՝ Այնթապ-Նուբարաշեն ճանապարհին:

Ըստ բժշկի տեղեկանքի՝ երիտասարդը ի վիճակի չի եղել բացատրություն տալու:

Ոստիկանության Արարատի մարզային վարչության եւ Մասիսի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նշված վայրում տուժողն ու նրան ուղեկցող անձը վիճել են չարենցավանցի մի երիտասարդի հետ, որն էլ սուր-կտրող-ծակող գործիքով երկուսին էլ խփել է: Տուժած մյուս անձը հիվանդանոց է դիմել հաջորդ օրը:

Ձեռնարկվում են միջոցառումներ 23-ամյա երիտասարդին եւ հանցագործության գործիքը հայտնաբերելու ուղղությամբ:

Հարուցվել է քրեական գործ:

Դանակը նետել էր գետը

Սեպտեմբերի 21-ին հիվանդանոցից ոստիկանության Թումանյանի բաժնում հաղորդում էր ստացվել, որ որովայնի վնասվածքներով բուժօգնության է տեղափոխվել 34-ամյա մի տղամարդ, որը հայտնել է, որ վնասվածքն ստացել է սրածայր առարկայի վրա ընկնելու հետեւանքով: Մինչդեռ քրեական հետախույզներն տեղեկություններ ունեին, որ նա մարմնական վնասվածքը ստացել էր վիճաբանելիս:

Թումանյանի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ մեղայականով բաժին է ներկայացել Ալավերդի քաղաքի 16-ամյա մի բնակիչ եւ հայտնել, որ զբոսայգում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ դանակով խփել է 34-ամյա տղամարդուն, իսկ դանակը նետել է Դեբեդ գետը:

Կատարվում է նախաքննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Զգուշացեք եւ չեք դառնա զոհ

Սուտը մարդկության չափ հին է: Որքան էլ ցավալի է՝ սուտն ու խաբեությունն առկա են գրեթե բոլոր հարաբերություններում: Ամեն մարդ իր կյանքում, կամա թե ակամա, թեկուզ մի անգամ խաբել է: Մեկին սուտը պարծենալու համար է պետք եղել, մյուսին՝ պատասխանատվությունից խուսափելու, ոմանց համար էլ խաբեությունը «մասնագիտական պարտականություն» է: Բոլոր չափահաս մարդիկ գիտեն խարդավանքի մասին, բայց շարունակում են խաբվել: Խարդախությունը նպատակին հասնելու յուրօրինակ ու հանցավոր մեխանիզմ է:

Սուտն ու խարդախությունը չի կարելի դիտել որպես սեփական կարծիքն արտահայտելու միջոց: Դա դիմացինին մոլորության մեջ գցելու դիտավորություն է: Խաբեությունը գործի է դրվում, երբ անօրինական ճանապարհով ինչ-ինչ նպատակներ կյանքի կոչելու խնդիր է առաջանում:

Խարդախության սուբյեկտիվ կողմերից մեկն էլ այն է, որ կատարվում է ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ հանցագործը գիտակցում է, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով ուրիշի գույքը հափշտակում է: Գիտակցում եւ իրականացնում է:

Մեզ հետ զրույցում հոգեբան Նունե Վարդանյանը ներկայացրեց խարդախների հոգեբանության որոշ կողմեր. «Խարդախության դիմողները բավական ծանոթ են անձի հոգեբանությանը: Նախ խարդախների կողմից ընտրվում է մարդ, որը հոգեբանական կամ սոցիալական տեսանկյունից խոցելի է: Նրանք գիտակցում են, որ այդ մարդկանց առավել հեշտ է խաբել, նրանք առավել հեշտ են ընկնում ուրիշի ազդեցության տակ»:

Գոյություն ունեն դիմացինին խաբելու, թյուրիմացության մեջ գցելու տարբեր մեթոդներ: Խաբեության գործիք կարող է դառնալ ամեն ինչ՝ ցանկացած փաստարկ, առարկա, երեւույթ: Թեեւ խաբելու հիմնական միջոցը խոսքն է, սակայն բազմաթիվ «աջակցող» պայմաններ կան, որոնք սուտը նմանեցնում են իրականության:

Նունե Վարդանյանը նշեց, որ խարդախները երկար են աշխատում դիմացինին գրավելու համար. «Լինում են դեպքեր, երբ խարդախությունը հիմնվում է դիմացինի՝ խարդախության նկատմամբ հետաքրքրության վրա: Այսինքն, երբ մարդուն խոստանում են նպատակին հեշտ հասնելու միջոց կամ հեշտ տրվող գումար, նրա մեջ առաջանում է հետաքրքրություն, եւ արդեն նա էլ է ցանկանում դիմել ռիսկային միջոցների»:

Խարդախներից շատերը մեծ ուշադրություն են դարձնում հագուստին. մարդիկ անծանոթի մասին հաճախ կարծիք են կազմում հենց նրա հագուկապի «բովանդակությամբ»: Բացի այդ՝ որոշակի հագուկապն ընդգծում է մարդու սոցիալական կարգավիճակը: Հնում այդ տարբերակումն առավել ընդգծված էր: Սովորական հագուստից զատ կա նաեւ, այսպես ասած, որոշ մասնագիտություններին հատուկ հանդերձանք, որի առկայությունը յուրօրինակ այցեքարտ է: Խարդախները վստահություն ներշնչելու համար հաճախ են հանդերձավորվում, իսկ դյուրահավատ զոհերը մոռանում կամ ամաչում են նրանից պահանջել ինքնությունը հաստատող փաստաթուղթ:

Մեր օրերում խարդախները առավել հաճախ ներկայանում են «գործ հարթողի» դերում: Եվ, որպես կանոն, մարդիկ խարդավանքի զոհ են դառնում, երբ փորձում են շրջանցել օրենքն ու իրենց համար ցանկալի գործարքն իրականացնել այլ ճանապարհով:

Առհասարակ, անծանոթ միջնորդների ծառայություններից օգտվելիս անհրաժեշտ է պարզաբանել ու ճշգրտել գործարքի բոլոր մանրամասները. նման դեպքերում մեծ է խարդավանքը բացահայտելու հավանականությունը: Փորձը վկայում է, որ չարժե մի քանի հազար դրամի խնայողության համար կարեւոր գործարքները վստահել անծանոթների, որոնք ամեն պահի կարող են ձեր փողերի հետ անհետանալ:

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության ավագ օպերլիազոր Գեւորգ Ազիզյանը նշեց, որ վստահության շարաշահում է նաեւ պայմանագիր կնքելը եւ դրա կետերը չկատարելը. «Առանձնակի ուշադրություն են ներկայացնում նաեւ այն դեպքերը, երբ խարդախության սուբյեկտի դերում հանդես են գալիս պաշտոնատար անձինք կամ քաղաքացիական ծառայողներ: Որպես կանոն, գույքին տիրապետողը նրանց ավելի շատ է վստահում, եւ վերջիններս չարաշահելով իրենց պաշտոնեական դիրքը՝ օգտագործում են այդ վստահությունն ու հափշտակում գույքը»:

Որոշ խարդախներ վստահություն ներշնչելու համար նախընտրում են զոհի հետ «սեղան նստել»: Այս մարտավարության «դրական» կողմերից մեկն էլ ալկոհոլի ազդեցությունն է, որը զոհի զգոնությունը նվազեցնում է «բնական» միջոցներով:

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածը վերաբերում է խարդախությանը: Խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը, պատժվում է օրենքով:

Օտարերկրացիների արկածները Երեւանում

Սեպտեմբերի 6-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում էր ստացվել, որ երկու օտարերկրացի տնտեսական ապրանքների խանութում հայկական դրամներին ծանոթանալու պատրվակով վերցրել են դրամարկղի փողերն ու հաշվելու ընթացքում խարդախությամբ հափշտակել 500 հազար դրամ. այլ կերպ ասած՝ կիրառել էին «փող ջարդելու» հայտնի մեթոդը:

Ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները օպերատիվ միջոցառումների շնորհիվ պարզեցին նրանց ինքնությունն ու բնակության վայրը, իսկ սեպտեմբերի 10-ին բերման ենթարկեցին բաժին: Նրանցից մեկի անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին տարբեր քաշերով դեղահաբի կտորներ: Նրա հայտնածով՝ թմրանյութ են եւ պատկանում են իրեն:

Սեպտեմբերի 14-ին ոստիկանության Նոր Նորքի բաժնում մի քաղաքացի հաղորդում էր տվել, որ մոտ մեկ ժամ առաջ Գայի պողոտայի խանութներից մեկում երկու օտարերկրացի ՀՀ դրամին ծանոթանալու պատրվակով մոտեցել են դրամարկղին, նրանցից մեկն ուսումնասիրելու համար փող է վերցրել եւ չարաշահելով հոր վստահությունը՝ հափշտակել 120 հազար դրամ:

Ոստիկանները լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզեցին, որ նշված հանցագործությունը կատարել են ԻԻՀ երկու քաղաքացիներ:

Սեպտեմբերի 16-ին կասկածվողները Սիմոն Վրացյան փողոցում հայտնաբերվեցին եւ բերման ենթարկվեցին ոստիկանության Նոր Նորքի բաժին:

Կատարվում է քննություն:

«Մասնագիտանում էր» Էրեբունի թաղամասում

Սեպտեմբերի 12-ին ոստիկանության Էրեբունու բաժնում բնակարանային գողության վերաբերյալ հաղորդում ստացվեց: Անհայտ անձը Երեւանի մի բնակչուհու տնից հափշտակել էր 600 հազար դրամ ու մոտ 1500 դոլարի ոսկյա զարդեր:

Ոստիկանության Էրեբունու բաժնի քրեական հետախույզները, համագործակցելով ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողների հետ, բացահայտեցին հանցագործությունը: Սեպտեմբերի 19-ին Էրեբունու բաժին բերման ենթարկվեց Հրազդանի բնակիչ, 25-ամյա մի երիտասարդ: Հետագա միջոցառումներով պարզվեց, որ բերման ենթարկվածը Էրեբունիում այլ բնակարանային գողություններ ու գողության փորձեր էր արել:

Կատարվում է քննություն:

Նույն բջջային օպերատորից

Սեպտեմբերի 19-ին ոստիկանության Մալաթիայի բաժնում հաղորդում ստացվեց, որ բջջային օպերատորներից մեկի սպասարկման եւ վաճառքի սրահից գողացել էին ժամացույց:

Մալաթիայի քրեական հետախույզները, ձեռնարկելով օպերատիվ միջոցառումներ, պարզեցին հանցագործությունը կատարելու մեջ կասկածվողի ինքնությունը եւ դեպքից ժամեր անց հայտնաբերեցին Երեւանի 28-ամյա բնակչին:

Հետագա միջոցառումներով պարզվել է, որ նա այդ օրը գողություն է արել նաեւ նույն բջջային օպերատորի մեկ այլ մասնաճյուղից:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

www.police.am

Կեղծ թղթադրամով գնորդը հայտնաբերվեց

Սեպտեմբերի 20-ին ոստիկանություն է զանգել Կոմիտասի պողոտայի թերթի կրպակի մի վաճառող եւ հայտնել, որ կրպակից ծխախոտ գնելիս անհայտ անձը վճարել է 20 հազար դրամ անվանական արժեքով կեղծ թղթադրամ:

Արաբկիրի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է գնորդի ինքնությունը: Բացատրական աշխատանքի շնորհիվ ՌԴ քաղաքացի 42-ամյա հայուհին ներկայացել է բաժին եւ տվել բացատրություն:

Նախապատրաստվում են նյութեր:

Խանութից գողությունը բացահայտվեց

Սեպտեմբերի 20-ին ոստիկանություն է զանգել մայրաքաղաքի Սայաթ-Նովայի պողոտայի մի խանութ-սրահի մենեջեր եւ հայտնել, որ հագուստի խանութը թալանել են:

Ոստիկանության Կենտրոնական բաժնից մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ առավոտյան հինգին տեխնիկական միջոցների գործադրմամբ դռան փականը կոտրել ու խանութից գողացել են հագուստ եւ այլ պարագաներ:

Քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ գողությունը կատարել է Գ. Նժդեհի փողոցի 16-ամյա մի բնակիչ, որը բերման է ենթարկվել բաժին:

Գողոնը մասամբ հայտնաբերվել է:

Նախապատրաստվում են նյութեր:

Հրկիզել էր վարձակալած տունը

Սեպտեմբերի 22-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում էր ստացվել, որ Հասմիկի փողոցում հրդեհ է:

Մեկնած ոստիկանության Մաշտոցի բաժնի օպերատիվ խումբը պարզել է, որ վարձակալական հիմունքներով Հասմիկի փողոցի տներից մեկում բնակվող 32-ամյա տղամարդը դիտավորությամբ հրկիզել է տունն ու դիմել փախուստի:

Ոստիկանները Լենինգրադյան փողոցից տղամարդուն բերման են ենթարկել Մաշտոցի բաժին: Նրա մոտ հայտնաբերվել է խոհանոցային երկու դանակ:

Նախապատրաստվում են նյութեր:

Դանակահարել էր կնոջը

Սեպտեմբերի 22-ին ոստիկանության Կոտայքի բաժին հաղորդում էր ստացվել, որ Ակունք գյուղում ամուսինը դանակահարել է կնոջը:

Մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ կենցաղային հարցերի շուրջ վիճաբանության ժամանակ Ակունք գյուղի 36-ամյա բնակիչը բռունցքով խփել է 36-ամյա կնոջ գլխին, իսկ դանակով՝ նախաբազկին՝ պատճառելով վնասվածքներ:

Տղամարդը բերման է ենթարկվել ոստիկանության Կոտայքի բաժին:

Նախապատրաստվում են նյութեր:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Ոսկուց շլացածները

Վարդենիսցի Վահրամ Աբրահամյանը Սոթքի ոսկու հանքում բեռնատարի վարորդ էր: Ոսկու հումք էր տեղափոխում եւ բեռնաթափում: Պարտականությունները կատարում էր հավուր պատշաճի: Գիտեր, որ հանքանյութ գողանալը քրեորեն պատժելի արարք էր:

Հունիսի 20-ին, սակայն, հերթական անգամ հանքանյութը դատարկելիս աչքով մի հանքաքար ընկավ. որոշեց գողանալ: Հարմար պահի հանքաքարը գցեց մեքենայի մեջ եւ իրենից գոհ շարունակեց աշխատանքը: Վահրամի մտքով չէր անցնում, որ Սոթքի հանքի անվտանգության աշխատակիցների աչքից չէր վրիպել: Քիչ անց մեքենայից հայտնաբերվեց գողոնը:

Կատարվածի վերաբերյալ ոստիկանության Վարդենիսի բաժնում նյութեր նախապատրաստվեցին: Այս դեպքով եւս կատարվում է քննություն:

Կատարվում է քննություն:

Ոսկու հանքի քարհատներ էին վարդենիսցիներ Ալբերտ Հովսեփյանը, Կամո Խաչատրյանը եւ Մերուժան Հարությունյանը: Ոսկու հումք էին աղում: Երեքն էլ իրենց գործի գիտակներն էին՝ լավ հումքը վատից տարբերող:

Հերթական աշխատանքային օրվա ընթացքում նկատեցին ոսկու մեծ կտորներ: Կողմնակի եկամուտ ստանալու գայթակղությունը երեքին էլ «տեղդի» մեջ գցեց: Համաձայնության գալով՝ կտորները առանձնացրին ու գրպանները լցրին, նաեւ կապեցին գոտկատեղին: Չէին էլ կասկածում, որ անվտանգության աշխատակիցները հեռադիտակով հետեւում են իրենց անօրինական գործողություններին: Երբ աշխատանքը ավարտեցին եւ պատրաստվում էին ավարով տուն գնալ, ստուգմամբ հայտնաբերվեց գողոնը:

Կատարվածով ոստիկանության Վարդենիսի բաժնում նյութեր նախապատրաստվեցին: Այս դեպքով եւս կատարվում է քննություն:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Գողություններ էր արել ու բռնվել

Ոստիկանության Դավիթաշենի բաժանմունքում տեղեկություններ էին ստացվել, որ Լոռու մարզի Շիրակամուտ գյուղի մի բնակիչ Դավիթաշենի վարչական տարածքում գողություններ է անում: Ձեռք բերված տեղեկությունների իսկությունը ստուգելուց հետո կասկածվողը ոստիկանություն հրավիրվեց:

Պարզվեց, որ նա սեպտեմբերի 5-ին Դավիթաշենի 4-րդ թաղամասում կայանված «ԲՄՎ» մակնիշի մեքենայից հայելի էր գողացել, նույն օրը վարչական շրջանի մի հանրախանութից՝ ոգելից խմիչքներ: Հաջորդ օրը մեկ այլ խանութից դարձյալ խմիչք էր գողացել:

44-ամյա տղամարդը տվել է խոստովանական բացատրություն:

Փաստի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը՝ նախկին ու ներկա

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը, որը մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու շահերը, ազատությունն ու սեփականությունը պահպանում է հանցավոր ոտնձգություններից, պատիժ է սահմանում մարդու կյանքի եւ առողջության դեմ ուղղված ցանկացած հանցագործության համար, անգամ եթե պատճառված մարմնական վնասը թեթեւ է եւ չի պարունակում առողջության քայքայման հատկանիշներ:

Քրեական օրենսգիրքը մարմնական վնասվածքները դասակարգում է երեք հիմնական տեսակի՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը եւ դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելը:

Քրեական գործի շրջանակներում նման տարբերակումը որոշվում է դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ: Ներկայումս բավական դյուրին է նման եզրակացություն տալը, իսկ հետաքրքիր է, թե նախկինում ինչպես են ընկալվել մարմնական վնասվածքները, ինչ պատիժներ են սահմանվել օրինազանցների նկատմամբ:

Հին հռոմեական օրենքում մարմնական վնասվածք հասկացություն, որպես այդպիսին, չկար: Իսկ ահա, հին գերմանացիները մարմնական վնաս էին դիտարկում արյունոտ վնասվածքները՝ ըստ բացվածքի խորության եւ չափի, ծեծը, որը վնաս էր պատճառում առողջությանը կամ բերում հաշմանդամության:

Լավագույն քրեական օրենսդրություն էր համարվում ֆրանսիականը, որը, 1863 թվականի մայիսի 13-ին ընդունված օրենքի համաձայն, մարդու դեմ ուղղված ցանկացած բռնություն, անգամ՝ դեմքին հասցված հարվածը կամ հագուստի պատառոտումը, գոտեմարտը համարում էր անձեռնմխելիության խախտում:

Ֆրանսիականի համեմատ մեղմ էր գերմանական օրենսդրությունը. բռնի համբույրը, ձեռնամարտը չէին դիտարկվում անձեռնմխելիության

խախտում: Դրանք մարմնական վնասվածք դիտարկելու համար անհրաժեշտ էր, որ պատճառված վնասվածքն ուղեկցվեր մարմնական ցավով ու տառապանքով կամ էլ ֆիզիկական տհաճ զգացողությամբ:

Նման օրենքներով են առաջնորդվել նաեւ հունգարացիներն ու հոլանդացիները:

Իսկ հին ռուսական օրենքով՝ մարմնական վնասվածքները, վիրավորանքները եւ անպատվությունը համարվում էին համազոր հանցագործություններ:

Մարմնական վնասվածքներ էին համարվում հաշմությունը, երբ խաթարվում էր որեւէ կարեւոր կենսական օրգանի աշխատանքը, եւ բաց, խոր վերքերը: Վիրավորանք էր դիտարկվում այն, որ մեկը մյուսին խփում էր ձեռքով, ոտքով կամ քաշքշում էին իրար մազերից, բայց չէին պատճառում հաշմություն ու վերք:

Ինչպես ներկայիս քրեական օրենսդրությամբ, այնպես էլ նախկինում ինքն իրեն պատճառած ցավի, տառապանքի կամ մարմնական վնասվածքի համար անձը չի ենթարկվում պատասխանատվության: Միայն այն դեպքում էին կանգնում օրենքի առաջ, եթե մարմնական վնասվածք պատճառելը որեւէ կոնկրետ նպատակ էր հետապնդել, ասենք՝ երբ խուսափել է զինվորական ծառայությունից:

Անձը չի ենթարկվել քրեական պատասխանատվության նաեւ այն դեպքում, երբ նման վնաս հասցրել է ծառայողական պարտքը կատարելիս կամ օրենքի պահանջը պաշտպանելիս:

Բոլոր դեպքերում, ներկա թե նախկին քրեական օրենսդրություններով, անձը մեկ այլ անձի հասցրած մարմնական վնասվածքի, պատվի, արժանապատվության, վիրավորանքի համար կանգնել է պատասխանատվության առաջ:

Հայաստանի Հանրապետության ներկայիս քրեական օրենսդրությունը պատժի տարբեր չափեր է սահմանում: Քրեական օրենսգրքի 112 հոդվածը պատիժ է նախատեսում դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար: Հոդվածի առաջին մասի հատկանիշներով՝ կատարած հանցանքի համար մեղադրյալը կարող է պատժվել ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով, իսկ նույն հոդվածի երկրորդ մասի հատկանիշներով՝ մեղադրյալը ազատազրկման կարող է դատապարտվել հինգից տասը տարի ժամկետով:

Քրեական օրենսգրքի 113 հոդվածը պատիժ է սահմանում դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու համար. հոդվածի առաջին մասի հատկանիշներով պատիժ կարող է սահմանվել կալանք՝ երեք ամիս ժամկետով կամ ազատազրկում՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: Միջին ծանրության վնաս պատճառելու համար հանցագործը կարող է պատժվել ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Ավարտալի ամփոփագիր

Պառկելատեղ

63-ամյա մի կին հաղորդում է տվել, որ իրեն պատկանող շենքի դիմացի հողատարածքից գողացել են պառկելատեղը, այլ կերպ ասած՝ շարժական մահճակալը, պարզ ասած՝ լեժանկան:

Ոստիկանների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ գողությունը կատարել է հաղորդում տվողի տարեկից հարեւանուհին: Նա բացատրություն է տվել, որ «լեժանկան» պատկանել է իրեն, մոտ հինգ տարի առաջ ինքն էր տվել հարեւանուհուն:

Պառկելատեղը հայտնաբերվել է:

Տգեղ արարք գեղեցկության սրահում

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ նախաբազկի վերքով բուժօգնության է դիմել գեղեցկության սրահի 39-ամյա մի տնօրենուհի:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ գեղեցկության սրահում վիճաբանության ժամանակ 43-ամյա վարսահարդարուհին է ապակե տարա նետել տնօրենի վրա, այն կոտրվել է ու վնասել նրա ձեռքը:

Ժամանակավոր ամնեզիա

50-ամյա մի տղամարդ զանգել է ոստիկանության բաժին եւ հայտնել, որ տնից գողացել են 170 հազար դրամ:

Նա հաղորդում է տվել, թե կինը աշխատավարձը դրել է ննջասենյակի պահարանում, իսկ օրեր անց նկատել է, որ փողը չկա: Տանտերերը նշել են նաեւ, որ կասկածում են իրենց տուն ելումուտ արած մարդկանց:

Հաղորդումից օրեր անց, մինչ ոստիկանները ստուգում էին ելումուտ անողների վարկածները, տղամարդը կրկին զանգել է բաժին եւ հայտնել, որ շփոթմունք է եղել: Կինը հանկարծ հիշել է, որ 170 հազար դրամը պահարանի դարակից վերցրել եւ դրել է պահարանի մյուս դարակում գտնվող հագուստի գրպանն ու մոռացել:

Նախկին ընկերուհու վրեժը

Գիշերվա չորսին ոստիկանություն զանգած 50-ամյա տղամարդը հայտնում էր, որ իրեն վրաերթի են ենթարկել: Մեկնած ոստիկաններին նա հաղորդում է տվել, որ 32-ամյա նախկին ընկերուհին, վարելով իր «Նիսանը», դիտավորությամբ վրաերթի է ենթարկել իրեն:

Անորակ պրոթեզ կամ որակով հարված

Ոստիկանություն է զանգել 73-ամյա մի կին եւ հայտնել, որ իր որդու կինն իրեն հանգիստ չի տալիս:

Պարզվել է, որ վիճաբանելիս հարսը ճանկռել է սկեսրոջ ձեռքերը, իսկ տասն օր առաջ նաեւ բռունցքով խփել է նրա բերանին եւ կոտրել արհեստական ատամնաշարը:

Սկեսուրը նախկինում ոստիկանություն չի դիմել հույսով, որ կհաշտվեն:

Գողություն «փափուկ սեյֆից»

Ոստիկանություն է զանգել 20-ամյա մի ուսանողուհի եւ հայտնել, որ իրենց տնից գողություն է կատարվել:

Մեկնած ոստիկաններին նա հայտնել է, որ ընտանիքին պատկանող 60 հազար դրամից, որը պահված է եղել ննջասենյակի փափուկ խաղալիքի մեջ, 50 հազարը գողացել են:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ ուսանողուհու 65-ամյա տատիկը խոստովանել է, որ գումարը վերցրել է ինքը՝ անձնական կարիքների համար:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ սեպտեմբերի 19-ից 26-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 25 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 1-ը՝ ծեծի, 1-ը՝ սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու, 1-ը՝ գողության, 2-ը՝ խարդախության, 1-ը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու, 1-ը՝ կեղծ սնանկության, 1-ը՝ խուլիգանության եւ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու եւ պետական սահմանն ապօրինի հատելու, 1-ը՝ ապացույցները կեղծելու, 1-ը՝ նրանց միջեւ ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 8 հետախուզվող:

Արձանագրվել է 111 ճանապարհատրանսպորտային պատահար. 4 մարդ զոհվել է, 165-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 18 դեպք. 1 մարդ զոհվել է, 17-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Սեպտեմբերին 18-ին Երեւանի Իսակովի պողոտայում «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենան բախվել էր ճանապարհի բաժանարար պատնեշին. 43-ամյա վարորդը եւ 35-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել էին հիվանդանոց: Սեպտեմբերի 21-ին վարորդը հիվանդանոցում, գիտակցության չգալով, մահացել է:

■

Սեպտեմբերի 23-ին Երեւան-Մեղրի ճանապարհի 48-րդ կմ-ին «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան բախվել է ձիով լծված սայլին, ինչի հետեւանքով պոկված բեկորները դիպել են հանդիպակաց ընթացող «Մերսեդես C-180» մակնիշի ավտոմեքենայի. 66-ամյա ձիավարը, «ՎԱԶ-2106»-ի 45-ամյա վարորդը եւ չորս ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 23-ին Երեւանի Ղ. Փարպեցու եւ Պուշկինի փողոցների խաչմերուկում «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 83-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 23-ին Արտաշատ-Վերին Արտաշատ ճանապարհի 2-րդ կմ-ին իրար են բախվել «ՎԱԶ-2107» եւ «ՎԱԶ-2104» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2104»-ի 50-ամյա վարորդը եւ երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, որտեղ ուղեւորներից մեկը մահացել է:

■

Սեպտեմբերի 23-ին Երեւանի Իսակովի պողոտայի, Բաբաջանյան եւ Երեւանյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Սամանդ», «Մերսեդես» եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 24-ին Երեւան-Մեղրի ճանապարհի 380-րդ կմ-ին «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենան բախվել է «ՎԱԶ-2101» մակնիշի ավտոմեքենայի. «ՎԱԶ-2101»-ի վարորդը եւ «Մերսեդես»-ի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 24-ին Երեւանի Նալբանդյան փողոցում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 54-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 24-ին Երեւանի Լենինգրադյան փողոցում իրար են բախվել «Մերսեդես» եւ «Նիսան» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 24-ին Երեւանի Աթոյան եւ Նոր Արեշի 3-րդ փողոցների խաչմերուկում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 62-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 24-ին Երեւանի Կոմիտասի պողոտայի եւ Փափազյան փողոցի խաչմերուկում իրար են բախվել «Հունդաի» եւ «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենաներ. «Ֆորդ»-ի 31-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 24-ին Երեւանի Նոր Նորքի 6-րդ զանգվածում «Միցուբիշի Կանտեր» բեռնատարի վարորդը վրաերթի է ենթարկել 75-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 24-ին Երեւան-Արմավիր ճանապարհի 26-րդ կմ-ին իրար են բախվել երկու «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. մեքենաներից մեկի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 24-ին Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամասից դեպի Բազում տանող դաշտամիջյան ճանապարհի 1-ին կմ-ին «ՎԱԶ-2104» մակնիշի ավտոմեքենան կողաշրջվել է. 50-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 24-ին Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցում իրար են բախվել «ԳԱԶ-2410» եւ «Մերսեդես Ե-320» մակնիշի ավտոմեքենաներ. «Մերսեդես Ե-320»-ի 36-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 24-ին Գյումրի-Բավրա ճանապարհի 32-րդ կմ-ին իրար են բախվել «Սկանիա» եւ «ՎԱԶ-2103» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2103»-ի 43-ամյա վարորդը եւ 41-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

ՀՀ ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մշտական մրցութային հանձնաժողովը հայտարարում է մրցույթ՝ ՀՀ ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության հետեւյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու մասին

1. Արարատի մարզային վարչության ֆինանսական խմբի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-497):

Կոտայքի մարզային վարչության ֆինանսական խմբի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-494):

Շիրակի մարզային վարչության ֆինանսական խմբի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-490):

Լոռու մարզային վարչության ֆինանսական խմբի (այսուհետ՝ Խումբ) առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-491):

Իրականացնում է Խմբի գործառույթներից բխող աշխատանքները եւ պատասխանատու է դրանց ժամանակին ու որակյալ կատարման համար, Խմբի գլխավոր մասնագետ-գլխավոր հաշվապահի հանձնարարությամբ իրականացնում է մարզային վարչության գործունեության ֆինանսական ոլորտի հաշվառման հետ կապված աշխատանքները, իրականացնում է աշխատավարձերի համակարգչային ծրագրերի մուտքագրում, փոփոխությունների գրանցում, անձնական քարտերի ընդհանուր հաշվառում, Խմբի գլխավոր մասնագետ-գլխավոր հաշվապահի հանձնարարությամբ՝ մասնակցում է Խմբի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր եւ այլ գրություններ:

Իրականացնում են պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթը կկայանա 29.10.2019 թ. ժամը 10.00-ին, ՀՀ ոստիկանության շենքում, ք.Երեւան, Նալբանդյան 130:

2. Շիրակի մարզային վարչության Ախուրյանի բաժնի առաջատար մասնագետ-գլխավոր հաշվապահ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-512):

Արարատի մարզային վարչության Արտաշատի բաժնի առաջատար մասնագետ-գլխավոր հաշվապահ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-544):

Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի առաջատար մասնագետ-գլխավոր հաշվապահ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-517):

Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջատար մասնագետ-գլխավոր հաշվապահ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-522):

Իրականացնում է Բաժնի գործառույթներից բխող աշխատանքները եւ պատասխանատու է դրանց ժամանակին ու որակյալ կատարման համար, Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է ոստիկանության գործունեության կոնկրետ ոլորտի հաշվառման հետ կապված աշխատանքները, իրականացնում է աշխատավարձերի համակարգչային ծրագրերի մուտքագրումը, փոփոխությունների գրանցումը, անձնական քարտերի ընդհանուր հաշվառումը, բաժնի պետի հանձնարարությամբ՝ մասնակցում է Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին, իր լիազորությունների շրջանակներում, ինչպես եւ Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր եւ այլ գրություններ:

Իրականացնում են պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթը կկայանա 30.10.2019 թ. ժամը 11.00-ին, ՀՀ ոստիկանության շենքում, ք. Երեւան, Նալբանդյան 130:

3. Արագածոտնի մարզային վարչության (այսուհետ՝ Վարչություն) ֆինանսական Խմբի գլխավոր մասնագետ-գլխավոր հաշվապահ (ծածկագիր՝ 03-Հ-3.1-27):

Վարչության խնդիրներից բխող եւ Խմբի գործառույթներին համապատասխան ապահովում է աշխատանքների իրականացումը եւ պատասխանատու է դրանց ժամանակին եւ որակյալ կատարման համար, իրականացնում է Վարչության անձնակազմի դրամական բավարարման ու աշխատավարձի եւ դրանց հավասարեցված վճարումները եւ կազմում հաշվետվություններ, կազմակերպում է Խմբի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքները, իր լիազորությունների շրջանակներում, ինչպես եւ Վարչության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր եւ այլ գրություններ:

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 31.10.2019 թ. ժամը 10.00-ին, ՀՀ ոստիկանության շենքում, ք. Երեւան, Նալբանդյան 130:

1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերում նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

◆ բարձրագույն կրթություն, քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններում կամ քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ ՀՀ համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,

◆ նշված պաշտոնի անձնագրում նշված լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես եւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

◆ համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, տիրապետում է (կարդում եւ կարող է բացատրվել) ռուսերեն լեզվին:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

◆ գրավոր դիմում (տրվում է Հանձնաժողովի անունով՝ նշելով այն պաշտոնը, որին հավակնում է դիմորդը),

◆ քաղաքացիական հատուկ ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ,

◆ տեղեկանք այն մասին, որ իր մոտ առկա չէ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի «Հանրային ծառայության պաշտոնն զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացմանը, ինչպես եւ ուսումնական հաստատություններում մանկավարժական կամ վարչական գործունեությանը խոչընդոտող հիվանդությունների ցանկը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 98-Ն որոշմամբ հաստատված հավելվածում ընդգրկված հիվանդություններից որեւէ մեկը,

◆ հայտարարություն այն մասին, որ ապագա աշխատանքը կապված չէ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր եւ քույր) քաղաքացիական ծառայողի նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ,

◆ հայտարարություն՝ տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվի (լեզուների) տիրապետելու մասին,

◆ հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

◆ հայտարարություն այն մասին, ինքը չի դատապարտվել հանցագործության համար, կամ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված է.

◆ արական սեռի անձինք ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին.

◆ 2 լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի.

◆ անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր (նույնականացման քարտ):

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9.30-ից մինչեւ 12.30-ը:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 18.10.2019 թ.:

ՀՀ քաղաքացիները ՀՀ ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող են դիմել ՀՀ ոստիկանության կադրային քաղաքականության վարչության քաղաքացիական հատուկ ծառայության անձնակազմի կառավարման բաժին՝ 306 կամ 313 սենյակ:

Հասցե՝ ք. Երեւան 0025, Նալբանդյան 130:

Հեռ.՝ (011) 52-83-74 (ներքին՝ 54-46), (010) 59-66-85 (ներքին՝ 56-85), (010) 59-64-56 (ներքին՝ 54-56):

Անտառապանություն

Անտառները երկրագնդի «թոքերն» են, որովհետեւ դրանք են թթվածնի հիմնական մատակարարները: Հայաստանում անտառները կազմում են տարածքի 12,7 տոկոսը: Ընդամենը: Էկոլոգիական անվտանգության տեսանկյունից անտառների դերը դժվար է գերագնահատել: Իսկ մեզ համար ամեն ծառն է թանկ:

Նախ դիմենք հանրագիտարանային տվյալների:

Հայաստանի անտառները լեռնային են, ունեն հողապաշտպան, դաշտապաշտպան, ջրապաշտպան, հակաէրոզային, ջրակարգավորիչ, կլիմայակարգավորիչ եւ ռեկրեացիային նշանակություն:

Անտառներն օդը հարստացնում են թթվածնով, բարձրացնում օդի հարաբերական խոնավությունը, կարգավորում մթնոլորտային տեղումների քանակը, մեղմացնում կլիման, բարերար ազդեցություն թողնում շրջակա դաշտերի բերքատվության եւ մարդու առողջության վրա:

Այս ամենը գիտակցել են նաեւ մեր նախնիները: Հայոց թագավորների հովանավորությամբ ու նախաձեռնությամբ տնկվել են, մասնավորապես, Սոսյաց, Ծնունդոց եւ Խոսրովի անտառները: Բայց դրանց զգալի մասը միջին դարերում ոչնչացել է օտար նվաճողների արշավանքների հետեւանքով:

Վերջին հարյուրամյակում էլ Հայաստանի անտառների տարածքը կրճատվել է մոտ երկու անգամ, բայց արդեն մարդու տնտեսական գործունեության հետեւանքով. ընկել է անտառների արտադրողականությունը եւ պաշտպանական ունակությունը:

Այսօր, կարեւորելով անտառի դերը, պարբերաբար կազմակերպվում են ծառատունկեր: Բայց ստացվում է, որ մի ձեռքով

տնկում ենք, մյուսով՝ կտրում:

Այս «մյուս ձեռքը» բռնելու համար ոստիկանությունը պարբերաբար իրականացնում է միջոցառումներ: Հերթականը սեպտեմբերի լույս 1-ի գիշերն էր: Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունը համագործակցեց Դիլիջանի, Սպիտակի, Ապարանի, Սեւանի, Հրազդանի, Կոտայքի եւ Կենտրոնի բաժինների աշխատակիցների հետ:

Միայն մեկ գիշեր, ու հասկանալի դարձավ, թե որքան անխնա է գործում այդ «կտրող ձեռքը»: Համատեղ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, ապօրինի ծառահատում կատարելու կասկածանքով, Դիլիջան-Երեւան եւ Վանաձոր-Երեւան ճանապարհների տարբեր հատվածներից բաժիններ բերման ենթարկվեց 57 բեռնատար՝ բեռնված, ընդհանուր առմամբ, 425 խորանարդ մետր փայտանյութով եւ չորս հազար հատ արկղի կիսապատրաստուքով:

Այս «խորանարդների» հետ ավելանում է մեզ եւ մեր սերունդներին սպառնացող էկոլոգիական վտանգը: Յուրաքանչյուրի անձնական տեսանկյունից դժվար է նկատել հասցված վնասի չափը. մի երկու խորանարդ մետր ցախ չի՞: Բայց երբ այդ «մի երկու խորանարդ մետրը» բազմապատկում ես օրական 57 բեռնատարով՝ հասկանալի է դառնում, որ հարցի լուծմանը հարկավոր է պետական մոտեցում, պետական խիստ վերահսկողություն: Մի բան, որ ներկայացված թվերի պատճառով թվում է, մեղմ ասած, թերի: Եվ քանի որ հարցը ոչ միայն արդիական է, այլեւ ապագային միտված՝ ապօրինի ծառահատումների դեմ պայքարը կրելու է շարունակական բնույթ:

Անցյալի ուրվականը

Տարիներ առաջ ընտրած «մասնագիտության» ուրվականը, որով վերջին հինգ տարում այլեւս չէր զբաղվում, հետապնդեց երեսունհինգամյա կնոջն ու այս անգամ նրան դարձրեց տուժող: Մեղադրյալը պատահական մեկը չի. կնոջ նախկին «գործատուն» է, հենց նրա օժանդակությամբ էր այն ժամանակ քսան-քսաներկու տարեկան Արեւիկը (պայմանականորեն այդպես կոչենք նրան) «ձեռք բերել» մարմնավաճառությամբ զբաղվելու «հավաստագիր», հենց նրա օգնությամբ էր առատաձեռն հաճախորդների սպասարկում:



Այսօր արդեն հարուցված քրեական գործը Արեւիկի նախկին «մասնագիտության» հետ անուղղակիորեն է առնչվում: Նրա նկատմամբ շորթում է կատարվել, եւ շորթողը՝ Արսեն Ավագյանը, նախկին «գործատուն» է: Տասնամյա վաղեմությամբ դիտարկելու դեպքում, չնայած, Արսեն Ավագյանին կարելի էր նաեւ մեղադրել մարմնավաճառության դրդելու մեջ: Համենայնդեպս, այսօր նա մեղադրվում է շորթում կատարելու համար, իսկ մյուս հանգամանքներն ու որակումները կճշտվեն նախաքննության ընթացքում:

Հիմա դառնանք շորթման փաստով հարուցված քրեական գործի նախապատմությանը:

Կեսգիշերին ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնում հնչած զանգը աշտարակցի Արեւիկից էր. նա հայտնում էր, որ Երեւանի բնակիչ Արսեն Ավագյանը նախկինում իր՝ մարմնավաճառությամբ զբաղվելու փաստը հրապարակելու սպառնալիքով հինգ հարյուր դոլար է պահանջում: Ենթադրելով, որ եթե մի անգամ տա պահանջված գումարը՝ Արսենի ախորժակը կբացվի, ու նա իրեն հանգիստ չի թողնի, կինը որոշել էր դիմել ոստիկանություն. Արսեն Ավագյանից ազատվելու իրական ելքը դա էր:

Հետո արդեն ոստիկանությունում Արեւիկը մանրամասնեց տասնամյա վաղեմության դեպքերն ու Արսեն Ավագյանի հետ իր առնչությունը:

...Արսենի հետ պատահական ծանոթությունը մտերմության վերածվեց, ու մի օր էլ նա Արեւիկին շահութաբեր «գործ» առաջարկեց՝ մարմնավաճառությամբ զբաղվել:

Տասը տարի անց Արեւիկն ասում է, որ Արսենն իրեն ստիպեց զբաղվել մարմնավաճառությամբ: Բայց այդ հայտարարությանը կարելի է վերապահումով մոտենալ: Տարիներ շարունակ ստիպո՞ւմ էր, իրեն այդ «գործից» փող չէ՞ր հասնում, որքան էլ Արսենն «առյուծի բաժինն» իր գրպանը դներ: Կամ՝ ստիպելը ո՞րն է. եթե շահագործվում էր, կարող էր, չէ՞, դիմել ոստիկանություն:

Չի դիմել: Զբաղվել է մարմնավաճառությամբ ու սեփական մարմինն ապրանք դարձնելով՝ փող է աշխատել իր ու նաեւ «գործատիրոջ»՝ Արսեն Ավագյանի համար:

Երկու-երեք տարի անց «գործունեության» ոլորտն ընդլայնվել է: Տեղական «հաճախորդներից» օգուտն այնքան էլ մեծ չէր, եւ Արսեն Ավագյանի առաջարկությամբ ու օժանդակությամբ՝ Արեւիկը հայտնվում է Թուրքիայում: Գիտեր՝ ուր եւ ինչու է գնում:

Հինգ-վեց ամիս Թուրքիայի տարբեր քաղաքներում զբաղվում է մարմնավաճառությամբ: Ինչպես Երեւանում՝ աշխատանքը շատ էր, հասանելիքը՝ քիչ: Ավելին՝ այստեղ նաեւ «սպասարկման» ծավալներն ու պահանջներն էին մեծ: Ծատացել էին նաեւ «գործատուները», եւ Արեւիկը կամովին շահագործվում էր:

Դեռ որքա՞ն կշարունակեր սպասարկել բազմապիսի «հաճախորդների», եթե հենց «աշխատավայրում» չբռնվեր Թուրքիայի միգրացիոն ծառայությունների կողմից ու չարտաքսվեր Հայաստան:

Արեւիկն ասում է, որ դրանից հետո որոշել է մարմնավաճառությամբ չզբաղվել ու խոսքի տերն է եղել:

Հրաժեշտ անցյալին. խոհեմ քայլ էր, բայց անցյալի ուրվականը հետապնդում էր...

Հինգ տարի անց Արսեն Ավագյանը կրկին խուժեց Արեւիկի կյանք: Այս անգամ «պահանջատիրությունն» այլ որակ ուներ: Արեւիկի անցյալի մասին ի լուր աշխարհի չէր պատմի հինգ հարյուր դոլարի դիմաց:

Սպառնալիքը լուրջ էր, նաեւ տխուր հեռանկարն էր տեսանելի: Միակ փրկությունը ոստիկանություն դիմելն էր, ինչն էլ Արեւիկն արեց:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Արսեն Ավագյանը հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանություն: Անձնական խուզարկությամբ նրա մոտից հայտնաբերվեց շորթման եղանակով Արեւիկից ստացած հինգ հարյուր դոլարը:

Փաստով քրեական գործ է հարուցվել:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

www.police.am

Գողությունը բացահայտվեց

Մայիսի 14-ին ոստիկանության Մաշտոցի բաժին էր զանգել մի կին եւ հայտնել, որ նախորդ օրը անհայտ անձը, ներկայանալով սոցիալական նախարարության աշխատակից, Հալաբյան փողոցի 28 շենքի բնակարաններից մեկի բնակիչ, 84-ամյա մորաքրոջ անուշադրությունից օգտվելով՝ բնակարանից գողացել է փող:

Փաստի առթիվ հարուցվել էր քրեական գործ:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ գողությունը կատարել է Երեւանի 45-ամյա մի բնակչուհի:

Կատարվում է նախաքննություն:

Վիճաբանություն Հնդկաստանի քաղաքացիների միջեւ

Սեպտեմբերի 19-ին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին ահազանգ էր ստացվել, որ Քանաքեռի 10-րդ փողոցի տներից մեկում ծեծկռտուք է:

Մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ ժամը 24.00-ի սահմաններում անհայտ անձինք վիճաբանելիս ձեռքերով եւ ոտքերով խփել են Հնդկաստանի հայտ անձինք վիճաբանելիս ձեռքերով եւ ոտքերով խփել են Հնդկաստանի Հանրապետության երկու քաղաքացիների՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ Թբիլիսյան խճուղուց, մարմնական վնասվածք պատճառելու կասկածանքով, բերման են ենթարկվել Հնդկաստանի Հանրապետության չորս քաղաքացիներ:

Կատարվում է քննություն:

Գողություն Դավիթաշենում

Սեպտեմբերի 18-ի կեսգիշերին ոստիկանության Դավիթաշենի բաժանմունք ահազանգ է ստացվել, որ Դավիթաշեն 2-րդ թաղամասի շենքերից մեկի բակում վիճաբանություն է:

Մեկնած օպերատիվ խմբին շենքի մի բնակչուհի հաղորդում է տվել, որ երկու անծանոթ անձինք իրենց բնակարանից գողություն են արել եւ նկատելով իրեն՝ դիմել են փախուստի, սակայն ամուսինը նրանցից մեկին բռնել է:

Շենքի մոտակայքից հայտնաբերվել է պայուսակ, որի մեջ հարմարեցված բանալիներ, ռետինե ձեռնոցներ ու նշված բնակարանից գողացված ոսկյա զարդեր էին:

41-ամյա տղամարդը բերման է ենթարկվել ոստիկանության Դավիթաշենի բաժանմունք եւ ձերբակալվել:

Ձեռնարկվում են միջոցառումներ երկրորդ անձի ինքնությունը պարզելու եւ նրան ու գողոնի մյուս մասը հայտնաբերելու ուղղությամբ:

Կատարվում է նախաքննություն:

Գրպանահատը բերման ենթարկվեց

Սեպտեմբերի 16-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում գրպանահատության վերաբերյալ հաղորդում ստացվեց: Երթուղային ավտոբուսներից մեկի սրահում անհայտ անձը գողացել էր մի կնոջ դրամապանակը: Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները սեպտեմբերի 18-ին բացահայտեցին հանցագործությունը եւ կասկածանքով Կենտրոնական բաժին բերման ենթարկեցին 29-ամյա մի երիտասարդի: Նա տվել է խոստովանական բացատրություն:

Կատարվում է քննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Գողացված հեռախոսների հետքերով

Սեպտեմբերի 10-ին ոստիկանության Մարտունու բաժնում հաղորդում էր ստացվել, որ անհայտ անձը «Մարտունի» բժշկական կենտրոնի ստոմատոլոգիական բաժանմունքում գողացել է մի կնոջ բջջայինը՝ պատճառելով 100 հազար դրամից ավելի վնաս:

Քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզվել է, որ գողությունը կատարել է Գեղարքունիքի մարզի գյուղերից մեկի 30-ամյա մի բնակչուհի: Կասկածվողը հրավիրվել է բաժին, տվել խոստովանական բացատրություն եւ ներկայացրել հափշտակված հեռախոսը: Դեպքի հանգամանքները պարզվում են: Նախապատրաստվում են նյութեր:

Սեպտեմբերի 11-ին Արարատի համայնքային ոստիկանները տեղեկություններ ստացան, որ սեպտեմբերի 9-ին Գոռավան գյուղի տներից մեկի բակից թանկարժեք բջջային հեռախոս է հափշտակվել: Չնայած տուժողը ոստիկանություն չէր դիմել, Արարատի ոստիկանները պարզեցին կատարվածի հանգամանքներն ու գողությունը կատարելու մեջ կասկածվող անձին հրավիրեցին բաժին:

Արարատի մարզի Ուրցաձոր գյուղում ապրող 39-ամյա տղամարդը տվեց ինքնախոստովանական բացատրություն եւ ոստիկաններին ներկայացրեց գողացված հեռախոսը, որը վերադարձվեց տուժողին:

Նախապատրաստվում են նյութեր:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Անչափահաս ականակը

Սեպտեմբերի 5-ին Կենտրոն վարչական շրջանի գրասենյակներից մեկից գողություն էր կատարվել, որի մասին ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում էր ստացվել: Նույն օրը ոստիկանության Կենտրոնական բաժնում գողության վերաբերյալ եւս մի ահազանգ հնչեց: Այս դեպքում գաղտնի հափշտակությունը կատարվել էր խանութում: Դեպքերի առթիվ բաժնի հետաքննության բաժանմունքում սկսվեց նյութերի նախապատրաստման գործընթաց: Քրեական հետախույզները զուգահեռ իրականացրին օպերատիվ միջոցառումներ՝ պարզելով, որ գողությունները կատարել է նույն անձը: Սեպտեմբերի 16-ին 16-ամյա կասկածվողը հայտնաբերվեց Հանրապետության հրապարակում, բերվեց ոստիկանության Կենտրոնական բաժին ու տվեց խոստովանական բացատրություն: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց թղթե փաթեթով մարիխուանայի նմանվող զանգված, որն ուղարկվել է փորձաքննության: Գողոնը հայտնաբերելու միջոցառումները շարունակվում են:

Կատարվում է քննություն:

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Սեպտեմբերի 19-ին Արմավիրի մարզի Մայիսյան գյուղի իր տնից ոստիկանության Մեծամորի բաժին բերման է ենթարկվել 50-ամյա Սարիկ Զ.-ն, որը 2018 թ. մարտից հետախուզվում է ՌԴ ՆԳՆ Սմոլենսկի մարզի իրավապահների կողմից՝ ՌԴ քրեական օրենսգրքի 159 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների եւ անցկացրած բացատրական աշխատանքների շնորհիվ սեպտեմբերի 19-ին «Զվարթնոց» օդանավակայանի ժամման սրահից ոստիկանության Կենտրոնական բաժին բերման է ենթարկվել 39-ամյա Վահե Ա.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

◆

Սեպտեմբերի 18-ին ոստիկանության Արաբկիրի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ Երեւանի Բաբաջանյան փողոցից բերման է ենթարկվել 32-ամյա Սուրեն Ս.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

◆

Սեպտեմբերի 18-ին Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել օտարերկրյա քաղաքացի, 29-ամյա Վարուժան Ա.-ն, որը հետախուզվում է ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի մարզի իրավապահների կողմից՝ ՌԴ քրեական օրենսգրքի 228 հոդվածի (թմրամիջոցների, հոգեմետ նյութերի ապօրինի արտադրություն, վաճառք կամ տեղափոխումը) մեղադրանքով:

◆

Սեպտեմբերի 22-ին Բագրատաշենի սահմանային վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել Վրաստանի 55-ամյա քաղաքացի Մուրման Տ.-ն, որը 2005 թ. սեպտեմբերից հետախուզվում էր Վրաստանի Թբիլիսի քաղաքի ՆԳՆ աշխատակիցների կողմից՝ Վրաստանի քրեական օրենսգրքի 144 հոդվածի (մի խումբ անձանց կողմից պատանդ վերցնելը) մեղադրանքով:

◆

Սեպտեմբերի 22-ին ոստիկանության Մասիսի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Բագրատաշենի սահմանային անցակետից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել, ապա ոստիկանության Մասիսի բաժին տեղափոխվել 44-ամյա Արշակ Բ.-ն, որը հունվարի 24-ից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 113 հոդվածի (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Արարատի բաժնի ծառայողները, օպերատիվ տվյալներն իրացնելով, սեպտեմբերի 20-ին Բագրատաշենի սահմանային անցակետից ոստիկանության Արարատի բաժին բերման են ենթարկել 40-ամյա Մանվել Վ.-ին, որը Արցախի Հանրապետության իրավապահների կողմից հետախուզվում էր ԱՀ քրեական օրենսգրքի 184 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

Ծխելը վնասակար է

Բոլորին է հայտնի ոգելից խմիչքների ազդեցությունը վարորդների վրա եւ դրա հնարավոր հետեւանքները: Սակայն, չգիտես ինչու, մարդիկ անտեսում են այն վտանգը, որ կարող է ներկայացնել ծխախոտը, իսկ որոշ վարորդներ էլ այն թյուր կարծիքին են, թե ծխելը վանում է հոգնածությունն ու քնելու ցանկությունը, ինչպես եւ՝ նպաստում աշխատունակության բարձրացմանը:

Գիտնականներն ապացուցել են, որ բարձրացված ապակիներով ավտոմեքենայում ծխելը վարորդի վրա համարյա նույն ազդեցությունն է ունենում, ինչ ոգելից խմիչքը: Եթե նույնիսկ մի գլանակ ծխելուց հետո առաջանում է կենտրոնական նյարդային համակարգի գրգռում, ապա դրան հաջորդում է արգելակման փուլը, որն ավելի երկար է նախորդից: Ծխելուց հինգ-տասը րոպե անց թուլանում է ուշադրության կենտրոնացումը, վատանում են շարժումների համաձայնեցվածությունն ու ճշգրտությունը, խախտվում են աչքաչափն ու գունազգացողությունը (հատկապես՝ կարմիրի եւ կանաչի), դանդաղում է ռեակցիան ու շտապ որոշումներ կայացնելու ընդունակությունը:

Այս ամենն իր հերթին նպաստում է մտավոր եւ ֆիզիկական հոգնածության արագ զարգացմանը, ուստի եւ՝ ճանապարհատրանսպորտային պատահարի ենթարկվելու հավանականության մեծացմանը:

ԱՄՆ-ի Մասաչուսեթսի համալսարանի բժշկական կենտրոնի գիտնականների խումբը հետազոտությունների արդյունքում եկել է եզրակացության, որ ծխող վարորդը ճանապարհային երթեւեկության կանոնների պոտենցիալ խախտող է:

Հարցում անցկացնելով 3700 վարորդների շրջանում՝ նրանք պարզել են, որ ծխողները կանոնների «մանր» խախտումների համար 46 տոկոսով ավելի հաճախ են տուգանվում եւ 50 տոկոսով ավելի հաճախ են ենթարկվում ավտովթարի, քան չծխողները: Այս ամենից բացի, ծխախոտը պարզապես շեղում է վարորդի ուշադրությունը ճանապարհից ու մեքենայից: Վարելու ընթացքում վարորդի մեջ աստիճանաբար զարգանում է գործողությունների ավտոմատացում, սակայն որքան էլ ավտոմատ լինեն շարժումները, ծխելը, այնուամենայնիվ, որոշակի ուշադրություն է պահանջում:

Սովորաբար մեկ գլանակ ծխելը մոտ 6 րոպե է: Բացի այդ՝ որոշակի ժամանակ է պետք նաեւ ծխախոտն ու լուցկին վերցնելու եւ տեղը դնելու, վառելու եւ մարելու, մերթընդմերթ մոխիրը թափ տալու համար: Այսպիսով, ստացվում է, որ ծխելու ընթացքում վարորդը, փաստորեն, ստիպված է լինում մեքենան վարել մեկ ձեռքով, ինչն, անշուշտ, անթույլատրելի է: Ավելին՝ նա ստիպված է լինում շարունակ հայացքը ճանապարհից ու մեքենայից շեղել դեպի ծխախոտը, վառիչը, մոխրամանը եւ այլն:

Պետք է նշել, որ շեղելով հայացքը, մարդը շեղում է նաեւ ուշադրությունը: Իսկ եթե հաշվի առնենք մեքենայի արագությունն ու վթարի անսպասելիությունը, ապա պարզ կդառնա, թե վարորդի ուշադրության թեկուզ ակնթարթային թուլացումն ինչ հետեւանքների կարող է հանգեցնել:

Հասկանալի է, որ ցանկացած գազ ավելի արագ կխտանա ավտոմոբիլի խցիկում, քան, ասենք, սենյակում: Հայտնի է, որ տեւական ճանապարհորդության ընթացքում ծխելու հետեւանքով այնքան ածխաթթու գազ է կուտակվում, որ լիովին բավական է թունավորվելու համար: Ավելորդ է խոսել այն մասին, որ լուցկին կամ վառիչը, ինչպես եւ ծխախոտը ինքնին հրդեհների ու այրվածքների պատճառ կարող են դառնալ:

Բնական է, որ մեր զգուշացումները ծխախոտի սիրահարներին չեն համոզի թողնել ծխելը, բայց հնարավոր է, որ ստիպեն չծխել գոնե մեքենա վարելիս, կամ հնարավորինս նվազեցնել արագությունը՝ ծխախոտը վառելիս եւ ծխելիս:

Անվտանգ սելֆի

Սելֆին այսօր աշխարհում ինքնանկար անելու երեւի թե ամենատարածված տարբերակն է: Սելֆիներով լի են սոցցանցերը: Վիճակագրության համաձայն՝ բրիտանացիներն ամեն ամիս սոցցանցերում հրապարակում են 35 միլիոն ինքնալուսանկար:

Հոգեբույժների ամերիկյան ասոցիացիայի գիտնականները եկել են եզրակացության, որ ինքնալուսանկարվելով տարվելը կամ, ինչպես ավելի հայտնի է՝ «սելֆին» հոգեկան խանգարում է: Նրանք հիվանդությունը դասակարգել են ըստ ծանրության աստիճանների:

Եվ այսպես՝ էպիզոդիկ սելֆիտ. մարդն իրեն նկարում է օրական ամենաքիչը 3 անգամ՝ դրանք չտեղադրելով սոցիալական ցանցերում, սուր սելֆիտ. ինքն իրեն նկարում է օրական ամենաքիչ 3 անգամ եւ տեղադրում սոցիալական ցանցերում, քրոնիկ սելֆիտ. ինքն իրեն նկարելու շուրջօրյա անզուսպ ցանկություն՝ բոլոր նկարները տեղադրելով սոցիալական ցանցերում՝ օրական 6 եւ ավելի անգամ:

Ինքնանկար անում են ամենուր՝ տանը, դրսում, մեքենայում, օդում, ջրում, վերամբարձ կռունկների վրա, շենքի կտուրներին... Ցավոք, հաճախ դա լինում է ինքնալուսանկարվողների կյանքի վերջին լուսանկարը: Սելֆին աշխարհում դարձել է հարյուրավոր մարդկանց մահվան պատճառ: Պատճառը մեկն է՝ վտանգավոր վայրում եւ պայմաններում լուսանկարվելը: Արժե՞, արդյոք, համացանցում մի քանի ավելի լայքի համար վտանգի ենթարկել կյանքը: Իհարկե՝ ոչ: Բայց, ցավոք, դա ոչ բոլորն են հասկանում:

Այսպես՝ վտանգավոր է ինքնալուսանկարվել կամ սելֆի անել մայրուղիների վրա, զենք կամ զինամթերքով, շենքի կտուրներին, գնացքի ռելսերի վրա, վագոնի տանիքներին, ջրային տարածքներում, աստիճանների վրա, բարձունքներում, վայրի կենդանիների հետ, կայծակի ժամանակ, պատուհանից կախված, մոտոցիկլի կամ մեքենայի ղեկին, էլեկտրալարերի մոտ եւ այլն: Նշված բոլոր դեպքերում տուժել են հարյուրավոր մարդիկ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Իթակե կղզու արքա
... Աղբալյան
«Առաջին ... երգը
Մորթե պարկ
Եղանակ
Շահույթ
«Տորք Անգեղ»
Վերքի նշան
Սավայի վտակ
Ռազմանավ
Մարմնի օրգան
Մաշկոտն թռչուն
Ֆիզիկայի բաժին
Ամերիկ. նկարիչ
Խալիֆ
Հնդկաց. ժողովուրդ
Հազար եկեղեցիների քաղաք
Ծրագիր
ԽՍՀՄ տիեզերագնաց
Անգլ. փիլիսոփա
... Ինդիա
Խորհրդ. մարշալ
Ազնավուր, երգ
Մարզ, ՀՀ
Իտալացի նկարիչ
Օրոր-...
Իմաստուն կենտավրոս
«Իվան Սուսանին»
Զովացուցիչ ըմպելիք
Արվեստի ստեղծագործութ.
Իտալական լրագիր
Զուկ
Արամազդի դպիրը
Խորհրդային ֆիզիկոս
Հիմնահատակ քանդված
«Զորի ...ն»
Թաց
Տարբեր մեղեդիներով պիես «Բոլերո»
Բաժին, հատված
Մաքսիմիլիան ...
Աբել
Մարզիկների ընտրանի
Վրաց. ժող. երգ
«Ուգրյում ...ը»
Մարմնի մաս
Ընդեղեն
Առագաստի կտորեղեն
Անապատ, Ասիա
Պարան
Գրային նշան
Անգլ. մանկագիր
...-Սիբիրյակ
Հայկ. հոգեւոր երգ
Նահանգ, ԱՄՆ
Կերոն
Զգեստ
Երկրաչափ. պատկեր
Հայ գուսան
Ռուս կինոռեժ.
Հանքանյութ
Ընտանի կենդանի
...-Մուրզա
... Մեգրե
Բեռնված ուղտեր
... Թարիվերդիեւ
Բարի լուր
... Գիբսոն
Վինյա դել ...
Հրաբուխ, Աֆրիկա
Չիու կաթից խմիչք
Ֆուտ. ռմբարկու
Հին հունական մարզ
Վանա լճի կղզի
Նկուղ
Ներկանյութ
Լիր արքայի դուստր
Ֆիջի
Չեխ կինոռեժիսոր
Ֆրանս. ֆիզիկոս
Ճառ
Քեն
Ճապոնացի գրող
Ռոբերտ դե ...
Նոտա
Պաբլո ...
Հռոմեացի զորավար
Ինքնաթիռ
Միջնադարի հայ ճարտարապետ
Մայր (բրբ.)
Մայն ...
... Սյունի
Անորակ արտադրանք
1912 թ. խորտակված նավ
Միրգ
Ալժիրի դրամ
Սամսոն եւ ...
Զեյմս ...
Եռանկ. ֆունկցիա
Շեւչենկո, պոեմ
Հացազգի բույս
Հանդիսավոր օր
Իսպանացի պարոն

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Աստղագուշակ

27.09 - 03.10

Խոյ - Մասնագիտական նպատակների իրականացումը ավելի հեշտ է, քան ակնկալում էիք: Ստանալով ցանկալի արդյունք՝ առաջ կգնաք:

Ցուլ - Հնարավորություն ունեք առաջընթացի հասնել գործերում, բայց դրա համար պետք է համառություն ցուցաբերեք:

Երկվորյակ - Հնարավոր է բարելավվի ձեր ֆինանսական վիճակը: Հավանաբար կլինի եկամուտի ավելացում:

Խեցգետին - Շաբաթը հաջող է նրանց համար, ովքեր ցանկանում են առաջ անցնել մրցակիցներից: Մրցակցելով՝ ձեր տրամադրությունը կբարձրանա:

Առյուծ - Պետք է երկար աշխատեք հաջողության հասնելու համար: Անակնկալների մի սպասեք:

Կույս - Աշխատանքի վայրում դիրքերը անկայուն են. պետք է նորից ձեռք բերեք ղեկավարության վստահությունը:

Կշեռք - Պատրաստեղեք հակառակորդների բացասական վերաբերմունքին, փորձեք նախօրոք ամրապնդել ձեր դիրքերը:

Կարիճ - Հիմնական դժվարությունները կապված են գործնական հարաբերությունների անորոշության հետ:

Աղեղնավոր - Հուզմունքի եւ անհանգստության առիթներ կստեղծվեն: Երբեմն սխալվելը հեշտ է, իսկ վտանգը հետապնդում է ձեզ եւ՝ գործնական, եւ՝ անձնական ոլորտներում:

Այծեղջյուր - Կարեւոր գործերը չհետաձգեք: Որքան շուտ զբաղվեք դրանցով, այնքան շատ շանսեր կունենաք հաջողության հասնելու համար:

Ջրհոս - Կարելի է հասնել հաջողությունների, սակայն դրա համար պետք է խորամանկ գտնվել: Հնարավորություն կունենաք հաղթել վաղեմի հակառակորդին:

Ձուկ - Չնայած դժվարություններին՝ պահպանում եք լավատեսությունը, չեք հրաժարվում գաղափարներից:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.c3-e1 a5:e5 2.e1:a5x

Խնդիր N2 1.c1-d2 h6:f4 2.d2-e3 f4:d2 3.e1:a5x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու
Հայաստանի չեմպիոն,
IDF վարպետ,
սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 26.09.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: